№ 212 Նոյեմբերի 28 (Դեկտեմբերի 10) 1880 Նոյեմբերի 28 (Դեկտեմբերի 10) № 212

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ-ին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից):

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամ. 5 ր., չորս ամ. 4 ր., երեք ամ. 3. ր. երկու ամ. 2 ր. և մի ամ. 1 ռուբլ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հնագիտական ժողով:—Ներքին տեսութիւն: Հայոց Թատրոն: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Արեւելեան գործեր: Ֆրանսիա:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Ֆելիետօն:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

—

Հնագիտական ժողովի պատրաստական կոմիտէտի նիստի մէջ, որ կայացաւ Թիֆլիսում Նոյեմբերի 26-ին, կոմս Ուվարով, Մոսկվայի պատրաստական կոմիտէտի Նախագահ, խօսեց Հնագիտական ժողովների Նպատակի մասին և նրանց նշանակութեան մասին Հնագիտութեան համար:

Կովկասը և Անդրկովկասը շատ հարուստ են Հնագիտական նիւթերով, բայց այդ նիւթերը գրեթէ բոլորովին հետազօտված չեն դեռ և.: Կոմս Ուվարով յորդորում է որ ոչ թէ միայն պատրաստական կոմիտէտի անդամները և Հնագիտութեան սիրողները օգնեն ամեն ոյժերով լինելու Հնագիտական ժողովի համար նիւթեր հաւաքելու, բայց և Կովկասի և Անդրկովկասի բոլոր բնակիչները իրանց կարողութեան չափ նպաստեն հարստացնելու ժողովի համար պատրաստվող նիւթերը, ամեն ջանք գործ դնեն պահպանելու մեր երկրի հնագիտական հարստութիւնները և գտնելու նոր առարկաներ ուսումնական հետախուզութեան համար, որպէս զի ժողովի գործունէութեան ասպարէզը աւելի ընդարձակվի և աւելի արդիւնաւոր լինի: Ժողովը մեր երկրի վերաբերութեամբ առաջինը լինելով, ի հարկէ, վերջնական խօսք չի ասի մեր երկրի հնագիտութեան մասին, այլ եթէ նա միայն հաստատ հիմք կը դնի Հայաստանի և Վրաստանի հնութիւնների գիտական հետազօտութեան,—դրանով արդէն մեծ ծառայութիւն արած կը լինի ընդհանուր գիտութեանը:

Մեր երկրի պատմութիւնը դեռ շատ կողմերից մութ և հակասական է, այդ պատճառով հնագիտական հետազօտութիւնների ճշդութիւնը մեծ նշանակութիւն պէտք է ունենայ մեզ համար, որովհետև այդ հետազօտութիւններով միայն կարելի կը լինի վերաստուգել պատմութիւնը, վերաքննել մեր պատմագիրներից յայտնած պատմական իրողութիւնների ճշդութիւնը կամ անճշդութիւնը:

Ձենք կարող և մենք մեր կողմից չը դիմել մեր երկրի բոլոր բնակիչներին, հրաւիրելով նրանց ամենամեծ յարգանքով վերաբերվել դէպի մեր երկրի հնութիւնների հետքերը, խնդրել նրանց մեծ խնամքով պահպանել արդէն գտնված հնութիւնները և աշխատել գտնել նորերը:

Եթէ մեզ թանգ է մեր երկրի ապագայ մտաւոր զարգացումը, մեզ թանգ պէտք է լինի և նրա քաղաքակրթական անցեալը: Մեր հարուստ անցեալը կը բացատրի մեզ մեր ներկան և միջոց կը տայ մեզ ճշտել դէպի մեր կուլտուրական ապագան:

Ամեն մի աւերակ, ամեն մի արձանագրութիւն, ամեն մի դրամ, ամեն մի հին գիրք, կամ մի հին զէնք, ամեն մի քար, ամեն մի ականջի օղ, կամ մի ժանգոտած դանակ հնութեան ժամանակներից մնացած՝ պէտք է ընդունենք որպէս մի գիտական սրբութիւն, պէտք է ինչպէս մի ամենամեծ հարստութիւն, մի ամենաթանգագին գանձ խնամք տանենք նրանց մասին, պահենք նրանց և յանձնենք գիտութեան ներկայացուցիչներին, որպէս զի այդ բոլորը դառնայ գիտութեան սեփականութիւն:

Գ. Ա.

ՖԵԼԻԵՏՕՆ

Կրօնական հարց:—«Արարատ» ամսագիրը և երկու հոգուց բաղկացած ազգութիւն:—Լուսաւորչական և այլակրօն հայեր:—Սինոդ և Ներսիսեան դպրոց:—Հասարակական և մասնաւոր կեանք:—Շօլիով և Էրիցով:—«Մեղու Հայաստանի» լրագրի վարմունքը:—Հրէայի հատած ձկան մասին անեկդօտը:—Թիւրքաց Հայաստանը և քիւրդերը:—Ռուս հեղինակ Շչէդրինի վէպը:—Պրոֆէսօր և մտրակ:—Կրօնական ազատութիւն:—«Մշակին» չնորհակալութեան ուղերձ:—Ադամեան, Զիգիանեան, տան և եօթ հազար բուբլ, Մամբրէ վարդապետ, Տէր-Ղազարեան, Նազարեան և Պապաջանեան:—Քարոզի ներգործութիւնը և թղթակիցների ծեծելը:—Կեղտոտութիւնների և անպիտանութիւնների մասին չը տեղեկանալու միջոց:—Հմուտ բժիշկ և խուլ պացիէնտ:—Պուշկինի յիշատակին արձանը և մի հայ բժշկի համար արձանը:

—

Ամենանշանաւոր հարցը, որ դեռ հետաքրքրում է մինչև այժմ ամբողջ հայոց հասարակութիւնը,—դա կրօնական այսպէս անուանված հարցն է: Մինչև անգամ այդ խնդրին պատասխանեց «Արարատ» ամսագիրը իր օլիմպիական բարձրութիւնից: «Արարատ» ամսագիրը իր տեսակէտից շատ ուղիղ է դատում և գոնէ քաջութիւն ունի յաջորդաբար լինել մինչև ծայրայեղութիւն, մինչև իդիոտութիւն:

Այդ հանճարեղ ամսագիրը, ընդունելով որ հայը կարող է միմիայն լուսաւորչական լինել, ընդունելով որ դաւանութիւնն է միայն ազգութիւն կազմողը և ի հարկէ չընդունելով և չը կարողանալով հասկանալ ազգութեան գաղափարը քաղաքական գիտութեան տեսակէտից, փառաւորապէս յայտնում է որ եթէ աշխարհս երեսին միայն երկու հայ-լուսաւորչական մնային, նրանք, այդ երկու մարդիկ, կը կազմէին հայոց ազգութիւն, և ոչ թէ ուրիշ մի որ և է կրօնին պատկանող մեծամասնութիւնը....

Խելքդ սիրեմ, «Արարատ», ինչ գեղեցիկ և նոր միտք.... ամբողջ լուսաւորված աշխարհը ապշած կը մնայ այդ համարձակ մտքից.... երկու մարդուց բաղկացած ազգութիւն: Եւ ի հարկէ այդ երկու մարդիկ կը լինեն՝ կամ Մանկունի եպիսկոպոսը և Մամրէ վարդապետը, կամ Ղազար Տէր-Ղազարեանց և Սարգիս Ղազարեան Նազարեանց....

Տեսնում էք ինչպէս հեշտ է վճռվում ամենադժուար հարցը, երբ հանճարեղ մարդիկ են յանձն առնում դժուար հարցերի վճռելը: Երկու հայ մարդ վեր առէք, միասին կանգնեցրէք, մէկը միւսի հետ պինդ կապեցէք,—ահա ձեզ հայոց ազգութիւն:

«Արարատ» կարծիքով եթէ, Աստուած չանի, ամբողջ հայ ազգութիւնը մի որ և է ուրիշ կրօն ընդունի, նա այլ ևս հայ ազգութիւն չի լինի, թէև բոլոր հայերն էլ հայերէն խօսեն, թէև հին պատմական, աշխարհագրական Հայաստանումն ապրեն, թէև Թիւրքաց Հայաստանը ինքնավարութիւն ստանայ, ունենայ իր ազգային ժողովը, իր դպրոցները, իր համալսարանը, իր պահպան ազգային զօրքերը, իր դատարանները և այն և այն.... Այնու ամենայնիւ նրանք հայեր չեն լինի, այլ հայերը, «Արարատ» ասելով, այն երկու մարդիկ կը լինեն, որոնք կը մնան լուսաւորչական: Այդպիսով մենք «Արարատ» չնորհով կը տեսնենք մինչև այժմ աշխարհս երեսին չը տեսնված երևոյթ. երկու հոգուց բաղկացած ազգութիւն:

Մի հարց լինձ շատ մեծ մտատանջութեան մէջ է գցում. այն ժամանակ ինչպէս կը կազմվի Էջմիածնի սինոդը, երբ նրա մէջ երկուսից շատ աւելի անդամներ կան, ինչպէս կընտրվեն վերջապէս Ներսիսեան դպրոցի հոգաբարձուները, երբ այդ դպրոցը օրինաւոր կերպով կառավարելու, աշակերտներին կեղտոտ չապիկներ հագցնելու և ներկած թէյ խմացնելու համար անպատճառ հարկաւոր են տասն և երկու հոգաբարձուներ:

Եթէ ազգը բաղկացած կը լինի միայն երկու հայ լուսաւորչականներից, իսկ մնացած դաւանութիւններին պատկանող հայերը հայեր չեն լինի, ով այն ժամանակ կառնի «ձայոց» գիրքը, ով նուիրատուութիւններ կանի յօգուտ ձեմարանի, նրա սեղանատան ու ննջարանի....

Ես դեռ կարող եմ ինձ երևակայել երկու հոգուց բաղկացած հայոց մշտական թատրոնական խմբի կոմիտէտ, որ առաջ եօթ հոգուց էր բաղկացած, յետոյ բոլորը միմեանց մէջ կուռեցան ու միմեանցից հեռացան, բայց երկու հոգուց բաղկացած ազգութիւն,—այդ, խոստովանվում եմ, ես դեռ այնքան գիտական չեմ, որ հասկանամ այդ տեսակ հանճարեղ միտք....

* * *

Ամեն ուրիշ ազգութիւն դժուարութեամբ է կազմակերպվում և հարկաւոր են միլիոնաւոր մարդիկ ազգութիւն կազմելու համար, իսկ հայերի մէջ երկու մարդ են բաւական ազգութիւնը կազմելու համար:

Բայց այդ միակ բանը չէ որ հայերի մէջ թարս է լինում: Ամեն բան հայերի մէջ ուրիշ կերպ է կատարվում, քան թէ այլ ազգութիւնների մօտ: Այժմեան դարում մարդու գործունէութիւնը, նրա մտքերը, նրա գործերը քննադատում են արդէն նրա կեանքի ժամանակ, իսկ ընդհակառակն մարդու անձնական, ընտանեկան կեանքին չեն զիպչում քանի որ նա կենդանի է, այլ հասարակական գործողի մահից յետոյ ճիշդ գոկումէնտների, նամակների, ժամանակակից թէ բարեկամ և թէ թշնամի ծանօթների թէ գրաւոր և թէ բառացի ցուցումների հիման վրա, անաչառ կերպով սկսում են քննադատել նրա մասնաւոր, անձնական, ընտանեկան կեանքը: Հայերիս մօտ, հակառակն է լինում: Ոչ ոք քաջութիւն չունի մարդու կենդանութեան ժամանակ քննադատել նրա գործունէութիւնը, բայց ընդհակառակն ամեն մարդ յանդգնում է մրոտել, ցեխ գցել մարդու երեսին, նրա անձնական կեանքը նկարագրելով, նրան բամբասել, նրան զրպարտել, ծուռ ու սխալ կերպով բացատրելով նրա արածները, հոգեբանական այս կամ այն երևոյթ չըմբռնած, քննադատել նրա ներքին կեանքի ամենանուրբ զգացմունքները,—դեռ նրա կենդանութեան ժամանակ:

* * *

Երկու մարդ մեզանում միմեանց շատ նման են այն կողմից, որ երկուսն էլ իրանց ամբողջ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Հայ մշտական Թատրոնական խումբը ներկայ սեզոնի սկզբից մի շարք Ֆրանսիական պիեսաներ ներկայացնելուց յետոյ, հինգշաբթի, նոյեմբերի 21-ին տուեց ,,Համլէտ,'' Շեկսպիրի ողբերգութիւնը և նոյնը կրկնեց երկուշաբթի նոյեմբերի 24-ին։ Անմահ Շեկսպիրի այդ գրուածքի հետ ծանօթանալու համար պէտք է շատ և շատ անգամ կարդալ թէ նրա գրուածները և թէ այն բազմաթիւ քննութիւնները, որոնք գրված են Շեկսպիրի ստեղծուածների մասին։ Այսքանը միայն կասենք, որ նրա իւրաքանչիւր թատրոնական գրուածքի և մանաւանդ ,,Համլէտի'' ամեն մի բառը, ամեն մի ստորակէտը առանձին նշանակութիւն ունի և իր մէջ խորիմաստ հոգեբանական քննութիւններ է բովանդակում։

Այսպիսի մի գրուածք ըմբռնելու համար հարկաւոր է զարգացած և մի և նոյն ժամանակ ծանօթ լինել Շեկսպիրի հեղինակութիւնների հետ, որոնց ներկայացնելու ժամանակ այն մարդիկ, որ շատ անգամ կարդացել են ներկայացնելի պիեսան, հարկաւոր են համարում ներկայացումից առաջ նրան դարձեալ մի անգամ աչքի անցնել։

Երբ մի հասարակութեան բեմի վրա դնվում է „Համլէտ,'' այդ հասարակութիւնը պէտք է այնքան զարգացած լինի, որ կարողանայ ըմբռնել ,,Համլէտի'' ոգին, որ կարողանայ հասկանալ պիեսայի մէջ գրված իւրաքանչիւր նախադասութիւնը, իւրաքանչիւր բառը և իւրաքանչիւր շեշտը։

Համլետի դեր կատարող դերասանը պէտք է տարիներով ուսումնասիրած լինի Շեկսպիրի բոլոր գրուածքները և առանձնապէս ,,Համլէտ'', որ կարողանայ յանդգնել բեմ դուրս գալ և կատարել Համլետի դերը։

,,Համլետի'' թարգմանողը պէտք է իմանայ անգլիերէն և մի քանի այլ եւրոպական լեզուներ և թարգմանութեան գործը այնպէս սկսի, կարծես նա ձեռք է տալիս մի սրբութեան։ Նա տարիներով պէտք է ուսումնասիրած լինի անմահ Շեկսպիրի գրուածքները թէ անգլիերէն և թէ եւրոպական այլ լեզուներից թարգմանված, —և յետոյ գործը սկսի։

Վերոյիշեալները ամենափոքր մասն են կազմում այն ճշմարիտ պայմանների, որոնք պէտք է ունենայ մի հասարակութիւն, որին կարելի լինի ցոյց տալ ,,Համլէտ'', մի դերասան, որ պէտք է կատարէ Համլետի դերը և մի թարգմանիչ, որ պէտք է այլ հնչիւնների անցնէ Շեկսպիրի գործը։ Կրկնում ենք սրանք այդ պայմանների ամենափոքր մասն են կազմում, որովհետև բոլորի մասին խօսելու համար մի ըեցենզիայի մէջ ամբողջ հատորներ պէտք է մոցնվէին։

Աւելորդ է խօսել հայ հասարակութեան անպատրաստականութեան մասին ,,Համլետը'' ըմբռնելու համար, քանի որ ամենքին յայտնի է, որ հայկական բեմը երկու տարի չէր կայ, ինչ կանոնաւորվել է և այդ ժամանակամիջոցի ընթացքում հասարակութիւնը ,,Համլէտը'' տեսնելու համար պատրաստվել է հայ թատրոնական խումբից այնպիսի պիեսաներով, որոնք ազդում են միայն արտաքին զգայարանների վրա, որոնք հեռու են կեանքից և զուրկ հոգեբանական քննութիւնից։

Աւելորդ է նոյնպէս խօսել և թարգմանութեան վերաբերութեամբ, որովհետև, ցաւելով պէտք է ասենք, որ հայ մշտական խումբը Շեկսպիրի ,,Համլետի'' տեղ ներկայացրեց պ. Սենեքերիմ Արծրունու ,,Համլէտ'', իր անտեղի և սխալ կերպով գործածած բառերով, աղաւաղված նախադասութիւններով, պարբերութիւնների կատարեալ ռուսաց դասաւորութիւններով և ոճի անհարթութեամբ։ Այդ բաւական չէ. ահագին և ամենանշանաւոր կտորներ դուրս էին գցած Շեկսպիրի պիեսայից։ Այդ կատարեալ սրբապղծութիւն է։

Անկասկած Ադամեանը լաւ դերասան է, տեղ տեղ նա շատ լաւ խաղաց և տպաւորութիւն գործեց, բայց նա Շեկսպիրի Համլետը չէր ներկայացնում, այլ ,,Լիսի Դիդիէ'', ,,Սէր առանց հմարման'' կամ իր խաղացած Ֆրանսիական այլ պիեսայի մարդկիզի, դուքսի, կոմսի դերը,—միայն Շեկսպիրի Համլետի շրջերում։

Ռուս կրիտիկոս Բէլինսկի պատմում է, որ առաջին անգամ, երբ ներկայացրին Մոսկվայում ,,Համլետ'', այդ պիեսան մեծ տպաւորութիւն գործեց և հասարակութիւնը նրան մեծ ոգևորութեամբ ու ծափահարութիւններով ընդունեց։ Բայց երբ կատարելագործեցին թարգմանութիւնն ու խաղը, այն ժամանակ նկատեցին որ առաջին անգամ ներկայացրածը Շեկսպիրի ,,Համլետը'' չէր....

Այդպէս էլ մեզ մօտ։ Այս օրերս հայերէն լեզուով ներկայացրած ,,Համլետը'' Շեկսպիրի ողբերգութիւնը չէ, այլ այդ անմահ գրուածքի լիբրետտօ է միայն։

* * *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԳՐՕԴՆՕ քաղաքից հաղորդում են մայրաքաղաքի լրագիրներին, որ նորերումս այդ տեղ մի նոր չինած ահագին տուն, որի մէջ զետեղված էր մի գործարան, փլվեցաւ և իր աւերակների տակ թաղեց մի քանի տասնեակ մշակներ։ Սպանվածների ընտանիքները վերջին թշուառութեան մէջ են։

—

«Русскій Курьеръ» լսել է, որ ներքին գործերի մինիստր, կոմս Լորիս-Մելիքով, նահանգապետներ նշանակելու ժամանակ վճռել է այդ պաշտօնների վրա գլխաւորապէս քաղաքական ծառայութեան պաշտօնեաներին նշանակել և ոչ թէ զինուորականներին, ինչպէս այդ մինչև այժմ մեծ մասամբ լինում էր։

—

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են, թէ այնտեղ կանանց մէջ շատ տարածվում է չռայլութիւնը. շատերը սկսել են թողնել իրանց հին, ազգային հագուստի ձևերը և հետևում են յիմար նորաձևութիւնների։ Այդ կողմերի ժողովրդի մէջ շատ տարածված է աղջիկներին անչափահաս հասակում մարդուն տալը. օրինակ, տասն տարեկան երեխան պսակում են երեսուն տարեկան տղամարդի հետ։ Մի այսպիսի կին, չը հասկանալով ամենևին ամուսնութեան նշանակութիւնը, իր մեղրամիսի սկզբներում, փախչում է մօր մօտ և սկսում է գանգատվել իր փեսայի վրա, ասելով թէ «ապէրը» իրան վատ վատ բաներ է ասում...

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են, թէ Բարսում գիւղացի մի մանկահասակ կին, չը կարողանալով համբերել իր անգութ ամուսնի բարբարոսութիւններին, փախչում է քաղաքը այնտեղ ապրուստ գտնելու համար։ Մի քանի անգամ ամուսինը գալիս է և նրան ծեծելով իր տունն է տանում, բայց կինը միշտ միջոց է գտնում փախչելու, յայտնելով, թէ կը մեռնի և չի կամենայ նրա հետ ապրել։ Ցետոյ ամուսին այրը դիմում է տեղային յաջորդ թաղէոս վարդապետին. այդ վերջինը առանց քննելու երկու ամուսինների անհաշտութեան պատճառները, հրամայում է բռնութեամբ տանել։ Գազան այրը խեղճ կնոջը ճանապարհին այնքան ծեծում է, որ բերանից, քթից և գլխից արիւն է հոսում։ Այդ դրութեան մէջ գտնում է նրան ոստիկանութիւնը։ Գործը հասնում է հաշտարար դատաւորի քննիչին։ Ասում են, որ կինը կը մեռնի։

—

ԹԻՖԼԻՍԻ եկեղեցիների տօնախմբութիւնների ժամանակ, գանազան կոյր և կաղ մուրացկաններ սովորութիւն ունեն մոմեր վաճառել մի քանի կոպէկ վաստակելու համար։ Մեզ հաղորդում են, որ սուրբ Գէորգ եկեղեցու տօնի ժամանակ, երէցփոխան պ. Արեշեանցը եկեղեցու դուռից արտաքսել տուեց մի ողորմելի կոյր մուրացկանի, որ ձեռքում բռնած ունէր մի քանի հատ մէկ կոպէկանոց մոմեր, որպէս զի նա իր վաճառքով եկեղեցու շահերին չը վնասէ։ Լուր հաղորդողը աւելացնում է, որ պ. երէցփոխանը փոխանակ կոյրերին հալածելու, աւելի օգուտ տուած կը լինի եկեղեցուն, եթէ իր հաշիւները մաքուր պահէ և ժողովրդին օրինաւոր հաշիւ ներկայացնէ։

—

Լսում ենք որ եկող տարվանից «Листокъ Кавказскихъ Объявленій» թերթը դառնալու է ամենօրեայ լրագիր «Кавказскій Курьеръ» անունով։

—

«Тифлисскія Объявленія» թերթը անցաւ պ. Բահատուրովի ձեռքից պ. Ալիխանովի ձեռքը։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ շաբաթ օր, նոյեմբերի 29-ին, երեկոյեան $7^1/_2$ ժամին լինելու է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան արտակարգ նիստ (ընկերութեան բնակարանում, Բարիատինսկայա փողոց, Ալէքսանդրեան այգիում)։ Նիստի առարկան լինելու է ընկերութեան խորհուրդի զեկուցումն «Այն միջոցների մասին, որոնցով կարելի է արգելել ֆիլօքսէրայի մտքը Կովկասեան երկիրը։» Արդէն ֆիլօքսէրայի երևալը Կրիմի մէջ մեծ վնասներ պատճառեց այդ երկրի խաղողի այգիներին։ Ընկերութեան անդամները հրաւիրվում են ներկայ գտնվել նիստին։ Մասնաւոր անձանց էլ թոյլ է տրվում մուտքը ընկերութեան այդ նիստի մէջ։

—

«Համլէտ» հայերէն լեզուով ներկայացնելու ժամանակ այնքան ցուրտ էր Պալմի թատրոնում, որ մեծ մասը հանդիսականներից պալտօներով և մուշտակներով էին նստած, իսկ շատերը թողեցին թատրոն և տուն գնացին ներկայացումն դեռ

սաստիկ տարածված էր համարվում, որ բազմաթիւ համակրողներ և կուսակիցներ ունէր, իսկապէս ոչ մի տեղ չէ ստացվում...»

Այդ ինձ յիշեցնում է հրէայի մասին անեկդոտը։ Մի հրէայ ծախում էր ձուկը, բայց ձուկը հոտած էր։ Առնողը զայրացած բացականչեց.

—Եղբայր պատուական, քո ձուկը շատ հին է, նա շատ վատ է հոտում։

—Ոչ, պարոն, պատասխանեց հրէան, որ անպատճառ կամենում էր ծախել իր ձուկը, դուք սխալվում էք, այդ ձուկը չէ որ հոտում է, այդ ես եմ հոտում։

* *

Ուրիշ մի խնդրի վրա էլ, այն է թիւրքաց հայերի դրութեան խնդրի վերաբերութեամբ «Մեղուն» շատ խելացի կերպով վարվեց։ Տարիներով նա հաւատացնում էր իր ընթերցողներին որ թիւրքաց հայերը ամենաերջանիկ դրութեան մէջ են գտնվում, որ թիւրքաց կառավարութիւնը հայրական խնամք ունի հայերի վրա, որ հայերի հարստահարված դրութիւնը նկարագրելով, լրագիրները զրպարտում են հրէչտակային թիւրքաց կառավարութիւնը, որ մեծ և աննկարելի սխալ կը լինէր, եթէ թիւրքաց հայերը պաշտպանվէին թիւրքաց զեղծումների դէմ, որովհետև այդ գեղծումները չը կան, ընդհակառակն հայերը թիւրքիայում շատ երջանիկ են։

Բայց յանկարծ Եւրոպան յարուցանում է հայոց խնդիրը, պահանջում է ճնշված և ստրկացած թիւրքաց Հայաստանի համար մարդկային իրաւունքներ, և ահա «Մեղուն» յանկարծ փոխում է իր լեզուն։

«Մենք քանիցս անգամ պաշտպանած ենք թիւրքաց հայերի իրաւունքները, որոնք յիրաւի ճնչված են անասելի բռնաւորութեան տակ. մենք մինչև անգամ բազմիցս պաշտպանել ենք և քիւրդերի իրաւունքները», բացականչում է մեր երևելի լրագիրը։

Ընթերցող, կարդացիք ռուս նշանաւոր գրող, Շչեդրինի վերջին պատկերները ժողովրդական կեանքից, կամ նրա պատումները, ինչպէս օրինակ «За Рубежомъ» զեղեցիկ գրուածքը։ Ռուս հեղինակը նկարագրում է այդ իր վերջին գրուածքի մէջ Մոսկվայի համալսարանի իրաւաբանութեան մի պրոֆէսորի տիպը, որ կարդում էր դասախօսութիւնները դեռ քառասուներորդ թվականներում։ Այն ժամանակ Ռուսաստանում մարմնի պատիժները դեռ ճանաչված էին օրէնսդրութեան։ Այն ժամանակ Ռուսաստանում մարմնի պատիժները դեռ ճանաչված էին օրէնսդրութեանից և հին ուսանողները յիշում են ինչպէս պրոֆէսորը փառաբանում էր մարմնի պատիժները, արդարացնում էր կնուտը, մտրակը, որպէս ամենաբարձր արդարադատութեան նշան, յանցաւորին բարոյականացնող և ազնուացնող միջոց։ Ցանկարծ, ներկայ թագաւորութեան ժամանակ մարմնի պատիժները վերցվումեն, կնուտը, մտրակը արգելվում են,—և ահա նոյն իրաւաբան պրոֆէսորը բարձրանում է ամբիոնը և ոգևորված ձայնով յայտնում է իր լսողներին։ «Մի մեծ բարոյական յեղափոխութիւն կատարվեցաւ մեր օրէնսդրութեան մէջ. այն ստրկացնող, ստորացնող, մարդու պատիւը ոտնակոխ անող միջոցը, թէկուզ այն մարդը ամենակուշտ յանցաւոր լինէր, մտրակը վերցված է մեր օրէնսդրութենից։ Արդարադատութիւնը իր նպատա-

չը վերջացած։ Երևում է որ հայոց ներկայացումների ժամանակ աւելորդ են համարում վառարանները վառել։

—

Շնորհակալութեամբ ստացանք 1000 օրինակ Մոսկվայում տպված մի հայերէն բրոշիւրի, որի վերնագիրն է «Մի զրոյց լուսաւորչական հայի հետ»։ Բրոշիւրի հեղինակն է պ. Ս. Դաղեանց։ Կուզարկենք այդ բրոշիւրը մեր բաժանորդներին «Մշակի» հետ միասին։

—

Նոյեմբերի 26-ին, երեկոյեան ժամը 8-ին ԹԻՖԼԻՍԻ հրապարակական գրադարանի դահլիճում կայացաւ հնագիտական ժողովի պատրաստական կոմիտէի նիստը։ Զեկուցումներ արին՝ կոմիտէի նախագահ Կոմարով, կոմս Ուվարով, Ա. Երիցով և Ն. Ցիլոսանի։

ԸՐՏՈՒՅԹԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Փարիզից „Polit. Corresp.“ լրագրին գրում են նոյեմբերի 20-ից հետևեալը։ Յունական սահմանների խնդիրը այստեղ մեծ եռանդով է ուսումնասիրվում։ Աշխատում են այնպիսի միջոցներ գտնել, որոնց օգնութեամբ կարելի լինի յանձնել Յունաստանին մի քանի նահանգներ այնպէս, որ Թիւրքիան մեծ փոփոխութիւնների չենթարկվի։ Առհասարակ այստեղի կառավարչական շրջանները հարկաւոր են համարում պահպանել Թիւրքաց կայսրութիւնը։ Այս ըսկզբունքի հետ ամենքը համաձայն են։ Ֆրանսիական կառավարութիւնը մոռադիր է գործադրել բարոյական բոլոր միջոցները, որպէս զի Թիւրքիան զիջումներ անէ։ Բացի այդ մինիստրութիւնը կաշխատի հանգստացնել յոյներին և համոզել նրանց համբերող լինել։ Որովհետև սլավեանները աջողութիւններ են ունենում Արևելքի մէջ, այստեղ վճռել են բարելաւել յոյների դրութիւնը։ Առ այժմ քաղաքական բոլոր գործերը մեծ զգուշութեամբ են կատարվում։

Լոնդոնից „Polit. Corresp.“ լրագրին գրում են նոյեմբերի 21-ից հետևեալը։ Վերջին անգամ Անգլիայի և միւս պետութիւնների մէջ եղած յարաբերութիւնները կատարեալ համաձայնութիւն կայացրեցին բոլոր կէտերի վերաբերութեամբ։ Առ այժմ պետութիւնները դիպլոմատիական ճնշում կը գործ դնեն Բ. Դրան վրա թէ Հայաստանի և թէ Թիւրքիայի եւրոպական նահանգների մէջ վերանորոգութիւններ մըցնելու և յունական խնդիրը լուծելու համար։ Գլադստոն մոռադիր չէ ստիպողական միջոցներ գործադրել և ամենից շատ աշխատում է եւրոպական համաձայնութիւնը պահպանելու համար։ Անգլիական կառավարութիւնը օֆիցերներից կազմված մի մասնաժողով նշանակեց Անգլիայի գլխաւոր նաւահանգիստների պաշտպանողական ոյժերը քննելու համար։ Փորտսմուտի և Լոնդոնի մոտակայ շրջանները լաւ են զինաւորված և ամրացած, բայց ծովային միւս մեծ քաղաքների պաշտպանողական ոյժերի վրա մինչև այժմ առանձին ուշադրութիւն չէ դարձված, այնպէս որ պատերազմի ժամանակ նրանց դրութիւնը չափազանց վտանգաւոր է։ Անգլիայի ափերի վրա այնպիսի կէտեր կան, որ թշնամու զօրքերը նաւերից հեշտութեամբ կարող են հողը իջնել։ Այս անյարմարութիւնների առաջն առնելու համար կառավարութիւնը մոռադիր է ամրացնել Անգլիայի ափերը և նրանց գլխաւոր կէտերը միացնել միմեանց հետ հեռագրաթելով։

Թէսսալիայից նոյն լրագրին հաղորդում են նոյեմբերի 18-ից։ Մի քանի օր սրանից առաջ այստեղ զինուորական անկարգութիւններ պատահեցին, որոնք ապացուցանում են, որ Թիւրք զօրքերի մէջ առաջվայ կարգապահութեան հետքն անգամ չէ մնացել։ Այստեղի Թիւրք թնդանօթաձիգները դիմեցին տեղական մուշիրին, պահանջելով հինգ ամիս չը ստացած ռոճիկները և արձակաթղթեր և սպառնացին, որ հակառակ դէպքում թնդանօթները կը դարձնեն դէպի Լարիսա և կը սկսեն ռմբակոծել քաղաքը։ Մուշիրի ընդունակութեան շնորհիւ այդ անկարգութիւնները մեծ չափեր չը ստացան։ Նա մեկնեց զինուորներին թիւրքիայի դժուար դրութիւնը, գովեց նրանց ազգասիրութիւնը և խոստացաւ կարելութեան չափ կատարել նրանց պահանջները։ Դրանից յետոյ նա միւս զօրքերի օգնութեամբ յարձակվեցաւ ապստամբ թնդանօթաձիգների վրա, ստիպեց նրանց անպայման հնազանդվել, իսկ անկարգութեան գլխաւորներին խստագոյն պատժեց։ Կարելի է հատաստ ասել, որ Թիւրք զօրքերի թիւը Թէսսալիայի մէջ 12,000 աւելի չէ։ Թէպէտ Թիւրքերը մեծ աղմուկներ են գցում իրանց պատերազմական պատրաստութիւնների մասին, բայց ցունաստանը կարող է հանգիստ լինել, որովհետև գոնեա Թէսսալիայի մէջ առանձին պատրաստութիւններ չեն նկատվում։

„Բէյտերի“ ընկերութեանը հեռագրում են Կ. Պոլսից, որ սխալ է այն լուրը, թէ թէ սուլթանը յայտնեց պետութիւններին, որ Վելի-Մահմեդի մահուան պատիժը նա փոխարինել է մշտական բանտարկութեամբ։ Երբ ռուսաց դեսպանատունը յիշեցրեց Բ. Դրանը Վելի-Մահմեդի գործը, Թիւրքաց կառավարութիւնը պատասխանեց, որ նա ժամանակ չունեցաւ այդ գործով զբաղվելու համար։ Նոյն ընկերութեան հաղորդում են, որ Գօշէն մոռադիր է շուտով Անգլիա վերադառնալ։

—

ՖՐԱՆՍԻԱ

—

Յայտնի է, որ Ֆրանսիական կառավարութիւնը նոյեմբերի 25-ին բաժանեց Ֆրանսիական ազգային ժողովների անդամներին „Գեղին Գիրքը“ Լրագիրների մէջ տպված են մի քանի քաղուածքներ այն հեռագիրներից, որոնց Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը ուղարկել է Ֆըրանսիական դեսպանին Լոնդոնում։ Երբ անգլիական կառավարութիւնը զարմանք էր յայտնել այն առիթով, որ Ֆրանսիան յետ կը կանգնի գործին մասնակցելուց, եթէ ծովային ցոյցը կը կորցնի իր խաղաղ բնաւորութիւնը, Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը պատասխանել էր հետևեալը։ „Այն նկատողութիւնները, պ. դեսպան, որ ձեզ արել է անգլիական արտաքին գործերի մինիստր լորդ Գրենվիլ, իմ կարծիքով, չեն կարող փոխել այն տեսակէտը, որով մենք նայում ենք գործին չերնոգորիական հարցի սկսվելու առաջին օրից։ Դուք այնքան մօտ ծանօթ էք մեր բոլոր բանակցութիւնների հետ, որ աւելորդ է մեկնել ձեր մեր դիտաւորութիւնների իսկական բնաւորութիւնը և բացի այդ մենք այնքան պարզ մեկնութիւններ ենք տուել անգլիական կառավարութեանը, որ նրան չը պէտք է զարմացնէր մեր բռնած ընթացքը, որ կատարելապէս համաձայն է մեր նախկին յայտնութիւնների հետ։ Մենք երբէք առիթ չենք տուել մոռածելու, որ դիտաւորութիւն ունենք թոյլ տալու ոյժ գործածել արևելեան գործերը կարգի բերելու համար։ Ընդհակառակը մենք միշտ հեռու ենք եղել ստիպողական միջոցներից և այս բանը շատ անգամ յայտնել ենք թէ լորդ Գրենվիլին և թէ նրա նախորդ մարկիզ Սալիսբիրիին։“

Շարունակութեան մէջ մինիստրը յիշեցնում է իր հեռագիրները, որոնք յայտնում էին, թէ յունական խնդրի պատճառով Ֆրանսիան երբէք ոյժի չի դիմի և ասում է։“ Եթէ սկզբից մենք այդպէս էինք վերաբերվում յունական խնդրին, որի լուծումը մեզ առանձնապէս հետաքրքրում էր, ուրեմն ակներև է, որ մենք այլ դիտաւորութիւններ չէինք կարող ունենալ չերնոգորիական հարցի պատճառով, որ մեզ համար շատ հետաքրքրական չէ։ Ցոյս ունեմ, որ այս մեկնութիւնները բաւական կը լինեն պարզելու համար մեր հայեացքները Արևելքը վրդովող հարցերի վրա։ Ձեր խօսակցութիւնների ժամանակ լորդ Գրենվիլի հետ խնդրեմ չը մոռանաք յայտնել նրան, թէ մեր քաղաքականութիւնը մինչև ո՞ր աստիճան ինքն իրան հաւատարիմ է մնացել բանակցութիւնները սկսելու օրից մինչև այժմ։ Թագուհու կառավարութիւնը անկասկած կը հասկանայ, որ եթէ հանրապետական կառավարութիւնը զգոյշ է վարվում, դրա պատճառը Ֆրանսիայի հասարակական կարծիքն է, որ այդքան միաձայն և եռանդով յայտնվեցաւ և որը մենք անպատճառ պէտք է 'ի նկատի առնէինք։ Հասարակական ցոյցերը, որոնք շատերին զարմացրին, մենք չափազանց բնական ենք համարում։ Դա համաձայն է այն խաղաղասէր քաղաքական պրոգրամի հետ, որ մենք ամենալաւն ենք համարում և որը Ֆրանսիական ամբողջ ժողովրդի կամքի արտայայտութիւնն է։ Թագուհու կառավարութիւնը, որ սովորել է յարգել անգլիական հասարակական կարծիքը, անկասկած կը հասկանայ, որ մենք իրաւացի ենք վարվում։ Մենք առանձնապէս ցանկանում ենք, որ անգլիական կառավարութիւնը համոզված լինի այդ իրողութեան մէջ, որովհետև մենք աշխատում ենք նրա հետ համաձայն գործել և որովհետև մեր հայեացքները շատ չեն զանազանվում անգլիական կառավարութեան հայեացքներից։ Չափազանց մեծ նշանակութիւն տալով եւրոպական համաձայնութեանը, մենք հարկաւոր ենք համարում որոշել մեր գործունէութեան սահմանները, որպէս զի այդ համաձայնութեան խանգարման պատճառը չը դառնանք։ Մեր պարզ բացատրութիւնները ապացուցանում են, որ բարի ցանկութիւններ ունենք։ Խնդրում համոզեցէք անգլիական կառավարութեանը, որ մենք գաղտնի դիտաւորութիւններ չունենք եւրոպական համաձայնութենից անջատվելու մասին։ Ֆրանսիական կառավարութիւնը հարկաւոր է համարում բացարձակ յայտնել իր կարծիքները և համոզմունքները գործադրելի այս կամ այն միջոցի յարմարութեան և անյարմարութեան մասին, որպէս զի այդպիսով բացատրի իր ընթացքը և հետևանքների համար պատասխանատու չը լինի։“

«ՄՇԱԿԻ» ԼԵՌՈՒՑԻՒՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 նոյեմբերի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, որ բարձրագոյն հրամայված է նոր ձևի 25 ռուբլիանոց թղթադրամներ հրատարակել։ Ս. Պետերբուրգի դուման հաւատարմատար ուղարկեց Ֆինլանդիա երկու միլիոնի հաց առնելու համար։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

կին չի հասնի երբէք, քանի կը գործ ածի մարմնի պատիժները, փոխանակ գործ ածելու համոզեցուցիչ, բարոյականացնող խօսքի կրթիչ ազդեցութիւնը. մարմնի պատիժը, մարդկային պատիւը անարգող այդ միջոցը պէտք է վաղուց վերցված լինէր և նա բաղդաւորապէս վերցվեցաւ մեզանում։»

Մեր համալսարանի պրոֆէսորից, ասում է Շէֆերին, չէր պահանջվում որ նա լուսաւորութեան լապտերը ձեռքին, առաջնորդէր իր լսողներին. նա պաշտօնեայ էր, նա ստանում էր իր ռոճիկը նրա համար որ ասի այն, ինչ որ նրան հրամայված էր։

Բայց լրագրապետից պահանջվում է որ նա առաջնորդի հասարական կարծիքը և աւելի լաւ է լռի, եթէ չէ կարող խօսել, քան թէ խօսի իր խղճմտանքի դէմ։

Այսօր «Մեղուն» զրգռում է լուսաւորչականների մոլեռանդութիւնը բողոքական և կաթոլիկ եղբայրների դէմ Ի՞նչ կասի նա վաղը, եթէ վաղը, օրինակ Թիւրքիայում, կը յայտնվի կրօնական կատարեալ ազատութիւն և քարոզութիւնների ազատութեան իրաւունքը։

Նա երեի կասի. «Մենք բազմիցս անգամ քարոզել ենք ժողովրդին կրօնական համբերողութիւնը և միշտ կուսակից ենք հանդիսացել կրօնական լայն ազատութեան, որոյ մէջ համոզվելու համար, թող կարդան մեր հին համարները»։

Շատ լաւ գիտէ, որ ոչ ոք իրան նեղութիւն չի տայ կարդալ նրա հին համարները։

* * *

Ինչ որ ես ասում էի իմ վերջին ֆելիետոնիս մէջ՝ կատարվեցաւ. ում վրա «Մշակը» յարձակվում է, նա առաջ է գնում և, ընդհակառակն, բաւական է, որ «Մշակը» մէկին գովէ, որ խեղճը ընկնի։ Մեր լրագիրը փոքր ինչ յարձակվեց մեր յայտնի դերասան Ադամեանցի վրա,—և նա կրկին հասարակութեան սիրելին դարձաւ, շատ ծափահարութիւններ և ընծաներ ստացաւ։ «Համլետի» ներկայացման ժամանակ։ «Մշակը» յարձակվեց մեր երևելի մանկավարժ Յովհաննէս Զիգիանեանի վրա,—և ահա պ. Զիգիանեանը այնքան բարձրացաւ Թիֆլիսեցիների աչքում, որ մինչև անգամ ընտրվեցաւ Ներսիսեան դպրոցի հոգաբարձու, այն ինչ մինչև մեր յարձակվելը նրա վրա Զիգիանեանի ընտրվելը Ներսիսեան դպրոցի հոգաբարձու նոյնքան անհնարին էր համարվում, որքան անհնարին է, որ Էջմիածինը վերադարձնէ ալաչկերտցիներին այն 17,000 ռ., որ հաւաքած է այդ ողորմելիների օգտին....

Երևի «Մշակի» շնորհով Մամբրէ վարդապետը շուտով եպիսկոպոս կը ձեռնադրվի, իսկ Ղազար Տէր-Ղազարեան, Սարգիս Ղազարեան Նազարեանց և Վասակ Պապաճանեանց կը հրաւիրվեն փիլիսոփայութեան պրոֆէսորներ Էջմիածնի ճեմարանում...

Կարծեմ արդարութիւնը կը պահանջէր, որ այն բոլոր պարոնները, որոնց վրա «Մշակը» յարձակվում է, մի շնորհակալութեան ուղերձ ուղարկէին «Մշակի» խմբագրութեանը, որպէս իրանց բարերարին։

* * *

Բայց ուրիշ կողմից մեր հակառակորդ մամուլն էլ, պէտք է անկեղծաբար խոստովանվենք, մեծ ներգործութիւն ունի ժողովրդի վրա, մեծ օգուտներ է տալիս և մեծ բարերարութիւն է անում ազգին։ Օրինակ նրա քարոզած միտքը, թէ համոզմունքներ տարածելու ամենալաւ միջոցը մարդիկներին ծեծելն է, նրանց ռեխը ջարդելն է, նրանց գլուխը կոտրելն է՝ շնորհալի հետևողներ գտաւ հայոց հասարակութեան մէջ։ Գաւառներում լրագիրների թղթակիցներին սկսեցին ծեծել, թէև ոչ կրօնական խնդրի առիթով, այլ ուրիշ խնդիրների համար, որ այդ ողորմելիները համարձակվեցան յարուցանել իրանց թղթակցութիւնների մէջ...

* * *

Վերջապէս այնքան կեղտոտութիւններ են կատարվում մեր հասարակութեան մէջ, որ ինչպէս նորերումս ասված էր «Մշակի» վերջին առաջնորդող յօդուածներից մինի մէջ դեռ պէտք է բացատրել մեր հասարակութեանը, թէ ինչ է բարոյականութիւն և թէ ինչ է անբարոյականութիւն։ Այդ աշխատանքը ես յանձն եմ առնում իմ հետևեալ ֆելիետոնում կատարելու։

Այո, այնքան կեղտոտութիւններ, անպիտանութիւններ և անիրաւութիւններ են կատարվում մեր չորս կողմը, որ մարդս չատ անգամ կը փափագէր զրկված լինել աչքերից ու ականջներից, որպէս զի չը տեսնի ու չը լսի, ինչ որ կատարվում է նրա չորս կողմը։ Բաղդաւոր են նրանք, որոնք կոյր են, բայց մանաւանդ խուլ են. այդ պատճառով բաղդաւոր են նրանք, որոնք պատիւ ունեն մեր մի մանկավարժ—պուբլիցիստ բժշկի պացիէնտներ լինել, որովհետև այդ մանկավարժ—պուբլիցիստ—բժիշկը մի չատ դիւրին միջոց է գտել ազատել մահկանացուներին լսողութեան ձանձրացնող և անհաճելի զգայարանից։

Այն բոլոր անձանց, որոնք զզուել են կեանքի անպիտանութիւնից, որոնք կուզենային զրկված լինել լսողութեան զգայարանից, որպէս զի չը տեսնեն այն բոլոր կեղտոտութիւնների մասին, որոնք իրանց չորս կողմն են կատարվում, խորհուրդ եմ տալիս դիմել վերոյիշեալ հմուտ բժշկին։ Գնացէք նրա մօտ և ասեցէք, որ դուք հիւանդ էք տենդով. և նա ձեզ խինինայի այնպիսի մի մեծ քանակութիւն ընդունել կը տայ, որ այնուհետև յաւիտեանս յաւիտենից խուլ կը լինէք։

Եթէ ես խուլ լինէի, ես անշուշտ աւելի բաղդաւոր կը լինէի, որովհետև տեղեակ չէի լինի այն ամենի վրա, որ կատարվում է իմ չորս կողմը, ուրեմն աւելի կը սիրէի կեանքը, աւելի կը սիրէի մարդկութիւնը, բայց մանաւանդ աւելի կը սիրէի իմ ազգս, որի խոշոր պակասութիւնների, ախտերի մասին տեղեկութիւն չէի ունենայ։

Այդ պատճառով, եթէ ռուսաց ազգը Պուշկինին արձան է կանգնեցրել, ես կարծում եմ, որ մենք, երախտագէտ հայերս, պէտք է կանգնեցնենք մի արձան այն մարդուն, որ միջոց է գտել ազատել հային լսողութեան զգայարանից։

Ցը տեսութիւն, ընթերցող, մինչև միւս ֆելիետոն։

Ասիացի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵՏՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆ պ. պ. ԸՆԴԱՄՆԵՐԸ հրաւիրվում են նոյեմբերի 29-ին, երեկոյեան $7^1/_2$ ժամին ներկայ գտնվել արտաքոյ կարգի նիստին ընկերութեան բնակարանի մէջ ընկերութեան խորհուրդի հետաւեալ զեկուցումը քննելու համար: «ՓԻԼՕԿԱՍԵՐԱՅԻ» դէմ ՄԻՋՈՑՆԵՐ գործադրելու համար, որ նա չը մտնի Կովկասեան փոխարքայութեան սահմանները և որի կորստաբեր ազդեցութիւնը յայտնվել է ՂՐԻՄԻ որթների վրա: Ժողովին կարող են ներկայ գտնվել նոյնպէս և օտար անձինք:

1—2

Ծախում եմ ՏՆԵՐԻ ՇԻՆՈՒԹԵՒՆ համար ՀՈՂԻ ԿՏՈՐՆԵՐ, ինչ չափի էլ կամենայ գնողը, Մուշայիդի այգու միւս կողմը. ՄԱԼԱԿՈՆՆԵՐԻ սկսած ՇԻՆՈՒԹԵՒՆ ՄՕՏ, իւրաքանչիւր քառակուսի ՍԱԺԻՆԸ ՀԻՆԳԻՑ մինչև ՎԵՑ ՐՈՒԲԼԻ: Հազար քառակուսի սաժէնից աւելի գնողներին իւրաքանչիւր քառակուսի սաժէնին 50 կ. ՀԻՍՈՒՄՆ Է լինում: ՓՈՂԵՐԻ ԿԷՍԻՑ ոչ աւելի վճարելը կարելի է ՈՒՇԱՑՆԵԼ տարեկան 8% վճարելով: Հարցնել Միխայլովսկայա փողոցի վրա № 123 ՏՆՆ տիրոջը: Կօլնիայում:

5—2

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ“

НА 1881 ГОДЪ, НА СЛѢДУЮЩИХЪ УСЛОВІЯХЪ:

СРОКИ.	Съ дост. въ Тифл. Руб.	Съ дост. въ Тифл. Коп.	Съ пересылкою иногородн. Руб.	Съ пересылкою иногородн. Коп.
На годъ	11	50	13	—
На полгода	6	—	7	—
На три мѣсяца	3	50	4	—
На одинъ мѣсяцъ	1	50	1	75

Подписка принимается въ г. Тифлисѣ, въ конторѣ газеты *Кавказъ*, на Барятинской улицѣ, въ домѣ подъ № 4. Иногородные адресуютъ свои требованія: въ Тифлисъ, въ редакцію газеты *Кавказъ*.

3—3

ՀԻՆԳՇԱԲԹԻ օր, 27-ին նոյեմբերի կը սկսվի ՋԱՆՋՈՒՂԱՋՕՎՆԵՐԻ մագազինում տղամարդկանց կօշիկների և գդակների վաճառումն, զիջումով, առանց ածուրդի: Առնողները կարող են ընտրել և փոխել առած կօշիկները: Նոյն տեղ վաճառումն դինու և արաղի նշանակված գներով:

2—5

ՄԵԲԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

պղնձէ, ցինկի, արճճի և ջրանցքների գործերի Եա. Եա. ԳԵՐՄԱՆԻ, գտնվում է Կուկիա, Միխայլովսկայա փողոցի վրա, տուն № 52, Թիֆլիս:

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ

ОТДАЮТСЯ ВЪ НАЙМЫ

МАГАЗИНЫ

ВЪ ОБРОУНОВ ПЕРЕУЛКѢ

вмѣстѣ отдаются

ПОМѢЩЕНІЯ

6—10

ՄՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է տալ ՀԱՅԵՐԷՆ և ՖՐԱՆՍԻԵՐԷՆ լեզուների դասեր: Հասցէն կարելի է իմանալ գրավաճառ պ. Աւետիք Էնֆիաջեանից:

2—8

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԸՆԴԼԻԿԱՆ ՄԵԳԷԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պլանտատորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաո և շօկոլադ-Ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամէն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէվոլվէրներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, դանակներ, զդալներ, թէյամաններ, բաժակներ, թամքեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակինտոշներ, կալենկօր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամէն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ: Երծրունում դալլերէում:

7—100

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՅԻ ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ երկար ժամանակ պարապել է առուտուրով, ցանկանում է ԿԱՌԱՎԱՐՉԻ, կամ կանտորշչիկի ՊԱՇՏՕՆ ստանալ: Հասցէն պէտք է թողնել „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը:

3—6

Հրատարակութեամբ Հ. Գրիգորեանցի մամուլի տակից դուրս եկաւ պ. Ն. Սիմէօնեանցի աշխատասիրած հայոց դպրոցների համար ընդհանուր աշխարհագրութեան դասագրքերը, որոնք արդէն ընդունվել են ինչպէս Թիֆլիսի, նոյնպէս և գաւառների հայոց երկսեռ ուսումնարաններում և Ս. Էջմիածնի ճեմարանում:

Դասագրքերը վաճառվում են բացառապէս Կովկասեան գրավաճառանոցում Հ. Գրիգորեանցի:

Ա. տարի՝ Նախագիտելիք (Հայրենագիտութիւն Թիֆլիսի) 35 կ.

Բ. տարի՝ մասն ուսումնական և բնական (31 պատկերներով) 60 կ.

Գ. տարի՝ մասն քաղաքական (Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա) 60 կ.

Գումարով առնողին զիջումն կը լինի:

4—20

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Հաւեմատեցէք թէյի ֆունտը	1 ր.	5 կ.		Մոսկվայից բերվող թէյի հետ			ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր. 10 կ.	—	—	—	— ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր. 20 կ.	—	—	—	— ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր. 40 կ.	—	—	—	— ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր. 60 կ.	—	—	—	— ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր. 80 կ.	—	—	—	— ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր. —	—	—	—	— ֆ. 3 ր.

6—100

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵՒՆ

ՄԵԾ ԻՀԽԱՆ ԿՈՎԿԱՍԵՏԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ

ԹՈՅԼՏՎՈՒԹԵԱՄԲ ԲԱՑՈՒԱԾ

Կուկիայում, Միմէօնովսկի փողոցի վերայ (կամրջից 3-դը Միխայլովսկի փողոց աջ կողմը), Հախվերդեանի տանը:

Հիւանդներին ընդունում են ամէն օր հետևեալ բժիշկները՝

Առաւօտեան ժամի 9—11

Նաւասարդեան—խիրուրգիական և վիներական (սիֆիլիտական) հ.

Բուդկովսկի—կանանց և ներքին հ.

Առաւօտեան ժամի 11—1

Լունկեվիչ—աչքերի, վիներական և կաշուի հ.

Հահազիզեանց—ներքին հիւանդութիւնների:

Երեկոյեան ժամի 5—7

Ուշակով—երեխայոց հիւանդութիւնների:

Պավլովսկի—ջղային, հոգեկան և ներքին հ.

Շաբաթ օրերը երեկոյեան ժամի 7—8 հիւանդներին ընդունում է ընդհանուր բժշկական խորհուրդը (консультація)

Էլեկտրաբուժութիւն—ամէն երեկոյեան ժամի 5—7:

Ծաղկահատութիւն (ծաղիկ կարել) բժշկի ձեռքով առաւօտեան ժամի 9—11:

Գիշերապահ բժիշկը—երեկոյեան ժամի 9-ից մինչև առաւօտեան ժամի 7-ը նպաստ է տալիս հիւանդներին նոցա տանը և հիւանդանոցում:

Հիւանդանոցումը կան և մշտական մահիճներ գիշերօթիկ հիւանդների համար:

Վարձ՝—երթևեկներից ցերեկը	— ր. 50 կ.
Փոքր օպերասիոններ իրանց վիրակապով	1 „ — „
Ընդհանուր բժշկական խորհրդի (консультація)	3 „ — „
Ծաղիկ պատուաստելու (կարելու)	1 „ — „
Գիշերապահ բժշկին հիւանդանոցումը	1 „ — „
— հիւանդի տանը	3 „ — „

Գիշերօթիկ տեղերի վարձը առանձին համաձայնութեամբ:

Ընդքատները անվարձ են ստանում բժշկական խորհուրդ և դեղ:

Հիւանդանոցումը մշտապէս բնակվում է բժիշկ Նաւասարդեանը:

Դիրեկտոր բժշկապետ Պավլովսկի

Լրագրական գործակալութեան

ԳԻԲՍԵՆՆԵԿՈՒՄ

Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

(Կօլօվինսկի Պրոսպեկտի վրա, Աղէքսանդրեան այգու մօտ)

Բաժանորդագրվում են, թէ տեղական, թէ ռուսաց և թէ արտասահմանեան պարբերական բոլոր հրատարակութիւններին, նոյն իսկ խմբագրատանց յայտնած գներով: Օտար տեղերից թող բարեհաճեն դիմել հետևեալ հասցէով.

Въ Тифлисъ, въ газетное агентство В. Шавердова.

30—11



Կ. ՊԱՆՅԵՐ

ԵՏԵՄԱՆՍԿԵՑԻ ՓՈՂՈՑ



տուն Զուբալովի: Եկող ձմեռվայ սեզօնի համար առաջարկվում են պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՐԱՆԵԿՈՒԹԵԱՄԲ ՁԵՌՔԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ ամենանոր ՁԵՒԵՐԻ չափազանց ԷԺԱՆ գներով, այլևայլ Ձեռքի մեքենաներ 12—15 րուբլ, Ոտքի 50—80 րուբլ:

31—52

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Ноября 1880 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.